FASTBANK

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(թվային տիրույթում)

«Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Բանկ) ծառայություններից օգտվելու նպատակով տալիս եմ իմ համաձայնությունն առ այն, որ.

✓ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով «Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ն (ՀՀ, ք. Երևան, Նորք-Մարաշ, Գ. Հովսեփյան փողոց 32/6) իմ՝ հաճախորդ հանդիսանալու ամբողջ ընթացքում ինձ մատուցվող ֆինանսական և այլ ծառայությունների համար հարցումներ կատարի «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ (ԷԿԵՆԳ) և ստանա, ինչպես նաև մշակի և օգտագործի ներքոնշյալ մարմինների կողմից տրամադրվող հետևյալ տեղեկատվությունը.

- *ՀՀ Ոստիկանության բնակչության պետական ռեգիստրից (անձը հավաստող փաստաթղթի տվյալները՝ տեսակը, համարը, տալու ամսաթիվը, վավերականության ժամկետը և տրամադրող մարմինը, դրանում նշված քաղաքացու անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, ծննդավայրը, սեռը, մահացած է, մահացած չէ, մահվան ամսաթիվը, ՀԾՀ-ն/չունենալու վերաբերյալ տեղեկանք, քաղաքացիությունը, ինչպես նաև բնակության/հաշվառման վայրի հասցեն և լուսանկարը),*
- *ՀՀ Արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալությունից (Ակտի համար (ամբողջական), ակտի տեսակ, ակտի համար, գրանցման ամսաթիվ, գրանցող բաժանմունք, վկայականի համար, վկայականի ամսաթիվ, երկրորդ վկայականի համար, երկրորդ վկայականի ամսաթիվ, նույնականացման համար, հայտը, դիմողի տվյալներ, հոր/ամուսնու/մահացողի տվյալներ, կնոջ/մոր տվյալներ, երեխայի տվյալներ, ծնողներ, քույրեր և եղբայրներ, երեխաներ, ամուսնու տվյալներ, այլ նյութեր, փոփոխված ակտի տվյալներ, ազատ նշումներ, բնակության վայրերի լրիվ ցանկ, կից նյութեր, մահվան մասին տեղեկություններ, վկաներ և ցանկացած այլ տեղեկատվություն),*
- *ՀՀ Ոստիկանության «Ճանապարհային ոստիկանության» ծառայությունից (ԱՍՄ շարժիչի հզորություն/ձիաուժ, ԱՍՄ գույն, ԱՍՄ VIN համար, Փաստաթղթի համար, ԱՍՄ հաշվառման համարանիշի տեսք, ԱՍՄ թափքի տեսակ, ԱՍՄ կարգավիճակ՝ հաշվառված է, հանված է, Սեփականության վկայականի համար, Պետ. հաշվառման վկայականի համար, ԱՍՄ տեսակի խումբ, ԱՍՄ մոդել, Տարանցիկ համարանիշ, Հատուկ նշումներ, ԱՍՄ թողարկման տարեթիվ, ԱՍՄ հաշվառման ամսաթիվ, ԱՍՄ շարժիչի համար, ԱՍՄ մակնիշ, ԱՍՄ կարգավիճակ, Կիրառված սահմանափակումներ, Գրավադրման մասին ցանկացած տեսակի տվյալ, Հաշվառված անձի մասին ցանկացած տեսակի տվյալ, Սեփականատիրոջ մասին ցանկացած տեսակի տվյալ, Ապահովագրման մասին ցանկացած տվյալ, Վարորդական իրավունքի վերաբերյալ ցանկացած տվյալ, Անձի հասցեի նկարագրի վերաբերյալ ցանկացած տվյալ) և ցանկացած այլ տեղեկատվություն,*
- *ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնից (Ոստիկանության ԻԿ օպերատիվ տեղեկատվություն՝ բազայում հայտնաբերված անձանց ցուցակը, ազգանուն, անուն, հայրանուն, ծննդյան տարեթիվ, ID քարտ),*
- *ՀՀ Արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայությունից (Վարույթի կոդ, Մուտքի ամսաթիվ, Հարուցման ամսաթիվ, Բնույթ, Պարտապանի անուն/անվանում, Պարտապանի հասցե, Բռնագանձման գումարի չափ, Կատ. ծախսի գումարի չափ, Հայցի ապահովման գումարի չափ, Վարույթի մնացորդ, Կատ. թերթի ամսաթիվ, Կատ. թերթի համար, նախկին համար, Կատ. թերթի պահանջ, նախկին պահանջ, եթե ընթացիկ չէ, ապա ինչ հոդվածով է փոփոխված, Փոփոխման ամսաթիվ, Վարույթի վիճակ),*
- *ՀՀ Պետական եկամուտների կոմիտեից աշխատավայրի ՀՎՀՀ, վճարված եկամտային հարկ, վճարված կուտակային, կենսաթոշակային վճարներ, աշխատած ժամերի քանակ, Անձի եկամուտների վերաբերյալ տվյալներ, ՀԾՀ կամ ՀԾՀ չունենալու մասին տեղեկանքի համար, անուն, ազգանուն, հայրանուն, գործատու/ներ/ի վերաբերյալ տեղեկատվություն, աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ (գումարի չափ, արժույթ), կազմակերպության հասցե, կազմակերպության անվանում, զուտ եկամուտ (գումարի չափ, արժույթ), պաշտոն/ներ/ի վերաբերյալ տեղեկատվություն (պաշտոնի անվանում և կոդ, պաշտոնավարման սկիզբ և ավարտ), քաղաքացիաիրավական հարաբերությունների սկիզբ և ավարտ, քաղաքացիաիրավական պայմանագրի շրջանակներում վճարված եկամուտներն*

FB_Public

(գումարի չափ, արժույթ), անձը հաստատող փաստաթղթի սերիա և համար, անձը հաստատող փաստաթղթի տեսակը),

- *Համայնքային էլեկտրոնային կառավարման միասնական հարթակից՝ (Գույքահարկի վերաբերյալ տեղեկատվություն, տրանսպորտային միջոցներ և անշարժ գույքեր, գույքին առնչվող անձանց տվյալների բաղադրիչներ, անձնագիր, ID քարտ, բիոմետրիկ անձնագիր, վճարման հաշվեհամար, հարկի վճարման ամսաթիվ, ՀԾՀ, անուն ազգանուն հայրանուն, տրանսպորտային միջոցների և անշարժ գույքերի գույքահարկ, գույքահարկի տարի (տույժի պարտք, տույժի գումար), տրանսպորտային միջոցի և անշարժ գույքի համար սահմանված գույքահարկի պարտք, գույքահարկի գումար, տրանսպորտային միջոցներին առնչվող տվյալների բաղադրիչներ (նույնականացման համար (VIN), արտադրող, միջոցի մոդելը, պետական հաշվառման վկայագրի համարը, ժամանակահատվածի ավարտ, արտադրության տարեթիվ, շարժիչի հզորություն (ձիաուժ), ժամանակահատվածի սկիզբ, հաշվառման համարանիշ, գույքի տեսակ, գույքահարկի տարի (տարի, գերավճար), անշարժ գույքերին առնչվող տվյալների բաղադրիչներ (տվյալների ստուգում, Ժամանակահատվածի ավարտ, հողի օգտագործման նպատակ, ժամանակահատվածի սկիզբ, գույքի տեսակ, կառույցի օգտագործման նպատակ, հողի կադաստրային ծածկագիր, կառույցի կադաստրային ծածկագիր)):*

✓ Բանկը իմ՝ հաճախորդ հանդիսանալու ամբողջ ընթացքում կարող է Բանկի կողմից մատուցվող ցանկացած այլ ֆինանսական ծառայությունների ստացման, ինչպես նաև փողերի լվացման և ահաբեկչության դեմ պայքարի կանխարգելմանն ուղղված գործողությունների իրականացման նպատակով ստանալ ցանկացած տեսակի այլ տեղեկատվություն այս համաձայնության շրջանակում, որը, ինչպես նաև վերը նշված ամբողջ տեղեկատվությունը օգտագործվելու և ուսումնասիրվելու է ֆինանսական և այլ ծառայությունների մատուցման, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված գործարքների համապատասխանության հսկողության հետ կապված ցանկացած գործընթացներում:

✓ Բանկի կողմից իմ անձնական տվյալները կարող են փոխանցվել համապատասխան պետական իրավասու մարմիններին և այլ իրավաբանական անձանց «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

✓ Բանկն իրավասու է իմ և Բանկի միջև իրավահարաբերությունների ամբողջ ընթացքում առանց ինձ նախապես տեղյակ պահելու, Բանկի հետ համագործակցող/Բանկին ծառայություններ մատուցող/Բանկի համար աշխատանքներ կատարող լոկալ և արտասահմանյան կազմակերպություններին տրամադրել իմ վերաբերյալ անհրաժեշտ բոլոր տվյալները, որոնք օգտագործվելու են բացառապես Բանկի կողմից տվյալ կազմակերպությունների հետ համագործակցության միջոցով ինձ ծառայություններ մատուցելու նպատակով:

✓ Սույնով տալիս եմ իմ համաձայնությունը, որ սույն համաձայնությունը թվային տիրույթում հաստատելու դեպքում համաձայնությանն առնչվող տեղեկատվությունը Բանկի կողմից ինձ տրամադրվի թվային տիրույթում առկա հավելվածում՝ իմ կողմից նշված էլեկտրոնային հասցեի միջոցով:

✓ Տալիս եմ իմ համաձայնությունն առ այն, որ իմ և Բանկի միջև իրավահարաբերությունների ամբողջ ընթացքում Բանկն առանց ինձ նախապես տեղյակ պահելու հարցումներ կատարի «Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն հիմնադրամ և ստանա իմ աշխատանքային գործունեության վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև այլ տվյալներ, որոնք Բանկի կողմից կարող են հաշվի առնվել ինձ հետ ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու վերաբերյալ որոշում կայացնելիս:

✓ Բանկի կողմից ինձ ուղարկվեն ծանուցումներ՝ «Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ի կողմից մատուցվող ծառայությունների հետ կապված ցանկացած տեղեկատվության վերաբերյալ:

✓ Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի դրույթներով՝ սույնով տալիս եմ նաև իմ համաձայնությունը և չեմ առարկում, որ «Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ի և իմ միջև կնքվող բոլոր տեսակի փաստաթղթերն (այդ թվում՝ ֆինանսական և այլ ծառայությունների մատուցման նպատակով կնքվող փաստաթղթերը) ստորագրվեն և կնքվեն էլեկտրոնային եղանակով՝ էլ. կնիքի և/կամ ձեռագիր ստորագրության էլեկտրոնային փոխակերպումների և նմանօրինակների միջոցով՝ որով իմ կողմից ստորագրված փաստաթղթերն հավասար իրավաբանական ուժ ունեն իմ կողմից ձեռագիր ստորագրված փաստաթղթերի համեմատ:

Գիտակցում եմ, որ սույն համաձայնության շրջանակներում Բանկի կողմից ստացված տեղեկությունները և տվյալները, կախված դրանց բովանդակությունից, կարող են ազդել «Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ի կողմից ինձ ծառայություններ մատուցելու հետ կապված կայացվող և կայացված որոշումների վրա:

FB_Public

Տեղեկացված եմ, որ սույն համաձայնությունը, ինչպես նաև իմ կողմից Բանկին տրամադրված անձնական տվյալները կարող են հետ կանչվել, ուղղվել, ոչնչացվել, իսկ տվյալների մշակումը՝ դադարեցվել իմ գրավոր դիմումի հիման վրա, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, ինչպես նաև այն մասին, որ սույն համաձայնությունը հետ կանչելու դեպքում Բանկն իրավունք ունի դադարեցնել ինձ ծառայությունների մատուցումը:

Տեղեկացնում եմ, որ Բանկն իրավասու է սույն համաձայնությամբ նշված հարցումները կատարել, ստանալ, ինչպես նաև մշակել և օգտագործել տվյալները իմ և Բանկի միջև իրավահարաբերությունների ամբողջ ընթացքում:

Ստացվող տվյալները կարող են պահպանվել օրենսդրությամբ սահմանված ժամկետում:

Հաստատել կոճակը սեղմելով՝ ես համաձայնվում եմ, որ կարդացել եմ սույն համաձայնությունը, այն ինձ համար ամբողջությամբ հասկանալի և ընդունելի է:

FB_Public